

ՊԱՐԵՍԻՆԻ ՀԻՄԱԿԱՐՑՈ ԵՎ ԹՈՒՔ-ՍԻՐԻԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ *

Արսեն Զուլֆալակյան

Բանալի բառեր՝ Պաղեստինի հիմնահարց, Սիրիա, Թուրքիա, Իսրայել, թուրք-սիրիական հարաբերություններ:

1990-ական թթ. սկզբին երկրներ աշխարհակարգի բևեռներից մեջի՝ ԽԱՀՄ վկուգումն ու ԱՄՆ գլխավորությամբ միաբներ համակարգի հաստատումն իր ազդեցությունն ունեցավ նաև Սերծավոր Արևելքում ընթացող միջազնական հարաբերությունների և այսուեղ առկա հիմնախնդիրների կարգավորման գործընթացների վրա: Այդ համատեքսուում տարածաշրջանի երկրները, այդ թվում Թուրքիան և Սիրիան, հարմարվելով միաբներ աշխարհակարգի պայմաններին, Սերծավոր Արևելքում առկա տարաբնույթ հիմնախնդիրների հանգուցալուծնան վերաբերյալ ձգուում էին ունենալու սեփական մոտեցումները: Այդ հիմնախնդիրներից էր նաև Պաղեստինի հիմնահարցը, որն իր ուրույն տեղն է գրավել Թուրքիայի և Սիրիայի արտաքին քաղաքականության մեջ 20-րդ դարի 90-ականներին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև կաքված Սայքս-Պիկոյի համաձայնագրով[1] Պաղեստինը ընդգրկվեց Սեծ Բրիտանիայի մանդատի ներքո: Հետագայում՝ Երկրորդ աշխարհամարտի ավարտից և մանդատային իշխանությունների վերացումից հետո, Սերծավոր Արևելքում տարածքային նոր բաժանումներ եղան: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի N 181 բանաձևով սահմանվեցին Իսրայելը և Պաղեստին պետությունների տարածքները[2]: Հիշյալ բանաձևը կյանքի չկոչվեց, ինչն էլ պաղեստինյան հիմնախնդիրի առաջացման և արաբա-իսրայելական պատերազմների պատճառ դարձավ:

1948թ. հոչակվեց Իսրայել պետությունը, մինչեւ Պաղեստին պետությունը իրողություն այդպես էլ չդարձավ: Նոյն թվականին սկսվեց առաջին արաբա-իսրայելական պատերազմը մի կողմից՝ Իսրայելի, իսկ մյուս կողմից՝ Եգիպտոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի և Իրաքի միջև: Արդյունքում՝ արաբական պետության համար նախատեսված տարածքի մեծ մասն անցավ Իսրայելին, այդ թվում՝ Երուսաղեմի մի մասը: Հորդանանին անցավ Հորդանան գետի արևմտյան ափը, այդ թվում արևելյան Եղուսաղեմը, Եգիպտոսի՝ Գազայի հատվածը: Երկրորդ արաբա-իսրայելական պատերազմի (1967թ.) արդյունքում Իսրայելին անցան արևելյան Երուսաղեմը, Հորդանան գետի արևմտյան ափը, Գազան, Սիրիայ թերակղզին, սիրիա-իսրայելական սահմանամերձ տարածքում գտնվող Գոյանի բարձունքները:

1967թ. նոյեմբերին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց բանաձև[3], որով Իսրայելից պահանջում էր հեռանալ նվաճված բոլոր տարածքներից: 1973թ. Սինայի թերակղում իսրայելական բանակային ստորաբաժանումները հարձակման ենթարկվեցին Եգիպտական զինուժի կողմից: այդ գործողությամբ սկսվեց արաբա-իսրայելական երրորդ պատերազմը: Ի պատճին իսրայելական զինուժին հաջողվեց ներականցել սիրիական տարածք և այսուեղ պաշարել Եգիպտական երրորդ

* Հոդվածն ընդունվել է 23.01.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ. գ. թ., դոցենտ, Մ. Վարդագարյան:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

բանակը: Իսրայելական զինուժի հաջորդ ռազմավարական հաջողությունը Եգիպտոսի Սուեզի ջրանցքի արևմտյան ափի նկատմամբ վերահսկողության հաստատումն էր, ո-րից հետո Եգիպտոսը ստիպված էր զինադադար խնդրելու: Չնայած սկզբնական հաջողություններին՝ սիրիական բանակին չհաջողվեց պահպանել իր կողմից ազատազրված Գողաններից արևելք ընկած տարածքները: Եգիպտոսի օրինակին հաջորդեցին նաև արարա-իսրայելական երրորդ հակամարտության մեջ ներքաշված մյուս արարական երկրները:

Պաղեստինյան հիմնահարցի հանգուցալուծման ակտիվ փուլն սկսվեց 1980-ական թթ. վերջում Միացիալ Նահանգների նախաձեռնողականությամբ ու դրանում հակամարտող կողմերի՝ Իսրայելի և Պաղեստինյան ինքնավարության ներգրավվածությամբ: Հիշյալի համատեքսում Պաղեստինյան ինքնավարության ակտիվ մասնակցությունն Իսրայելի հետ բանակցային գործընթացում, ամերիկան միջնորդությամբ Իսրայելի հետ հարաբերություններում որպես ինքնուրույն բանակցային կողմ Պաղեստինի հանդես գալը դժգոհություն առաջացրեց մի շարք արարական երկրներում, այդ թվում Միջազգային: Վերջինս նույնապես ԱՄՆ միջնորդությամբ փորձում էր կարգավորել հարաբերությունները Իսրայելի հետ:

1990-ական թթ. սկզբում ամերիկան իշխանությունների մասնակցությամբ ակտիվացավ իսրայելա-սիրիական բանակցային գործընթացը ևս: Իսրայելական իշխանությունների գոլանի բարձունքների հետ կապված զնալու գիշումների պատրաստակամությունը գուգակցվեց սիրիական իշխանությունների կողմից Իսրայելի հետ ամբողջական խաղաղության ու Գոլանի բարձունքներից հետական զինուժի ամբողջական հեռացման կոչերով[4]: Սակայն հիշյալ գործընթացը հայտնվեց փակուղում, քանի սիրիական և իսրայելական իշխանությունները միմյանց ուղղված բննադրատական տեսակետներ հնչեցրին երկողմանի հարաբերություններում հանգուցալուծման հասնելու ցանկության բացակայության համար:

Իսրայելի հետ չստացված հարաբերությունների ֆոնին Միջամարար էր տրամադրված իր հարևան արարական երկրների և Իսրայելի հետ հարաբերություններում ցանկացած դրական տեղաշարժերին, այդ թվում նաև Իսրայել-Պաղեստինյան ինքնավարություն հարաբերությունների հետ կապված:

Պաղեստինյան ինքնավարության և սիրիական իշխանությունների միջև երկար ժամանակ նկատվող մրցակցությունը հատկապես ավելի նկատելի դարձավ <Ասադ-Յ.Արաֆաթ հարաբերություններում առկա հակասություններով> (1966 թ. սիրիական իշխանությունների կողից Յ. Արաֆաթը ձեռքբակալվեց և նույնիսկ մեկ ամսից ավել պահվեց բանտում): <Ասադը ամեն կերպ փորձում էր թուլացնել ՊԱԿ-ի դիրքերը որպես համապատեստինյան դեկավար կառույցի, որին հասնելու ճանապարհներից մեկը նաև դիվանագիտական ակտիվությունն էր [5]: Ավելին՝ 80-ականների վերջին պաղեստինյան իշխանությունների, մասնավորապես Յ.Արաֆաթի դիրքորոշումն ու հրետորարանությունը՝ ուղղված Դամասկոսին, ընդգծված սուր էր[6]:

Սակայն 1991թ.՝ Պարսից ծոցի առաջին պատերազմից հետո, սիրիա-պաղեստինյան հարաբերություններում որոշակի փոփոխություններ նկատվեցին: Իրաքի կողմից թուվելի նվաճումը ստիպեց արարական երկրներին դիրքորոշում հայտնելու հիշյալ հակամարտության վերաբերյալ և ներգրավել հակամարտող ճամբարներից մեկի մեջ՝ փնտելով դաշնակիցներ հենց արարական երկրների շրջանում: Այդ առումով Միջամար և Պաղեստինյան ինքնավարությունը հայտնվեցին միևնույն ճամբարում: 1991թ. մայիսին սիրիական իշխանություններն ազատ արձակեցին 1500 պաղեստինյան բանտարկյալների և հրաժարվեցին Յ.Արաֆաթին ՊԱԿ-ի առաջնորդի պաշտոնում փո-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

խարինելու փորձերից, և երբ Յ.Արաֆարը ժամանեց Դամասկոս, ջերմ ընդունելության արժանացավ <Ասադի կողմից[7]:

Հակառակ սիրիա-իսրայելական հարաբերություններում արծանագրված հետընթացին՝ 1993թ. սեպտեմբերի 13-ին Վաշինգտոնում իսրայելի արտգործնախարար Շ.Պերենսը և ՊԱԿ-ի գործկոմի անդամ Արու Արաքը պաշտոնապես վավերացրին Օպոյում ձեռք բերված համաձայնությունները: Համաձայնագիրը ստորագրվեց Բ.Քիհմունի, Զ.-Բուշի, Զ.Քարտերի և 3.000 հյուրերի ներկայությամբ: Ի.Ուարինը և Յ.Արաֆարը միմյանց ձեռք սեղմեցին: Այս կարգեց նոյն սեղամի վրա, որտեղ 15 տարի առաջ ստորագրվել էր Քենս-Ղվահի համաձայնագիրը: Համաձայնագիրը կրում էր «Հշչակագիր ժամանակավոր ինքնավարության սկզբունքների մասին» վերնագիրը: Ըստ հշչակագրի՝ ստեղծվում էր Պաղեստինի ինքնավարություն՝ Պաղեստինյան ինքնակառավարվող սահմանափակ իշխանություն (limited self-rule): Գազայի շրջանում և Արևմտյան ավի Երիհոն քաղաքում: Հաստատվում էր, որ Գազայի շրջանը և Արևմտյան ավի կազմում են տարածքային մեկ միավոր: Սահմանվում էր անցումային շրջան՝ ոչ ավել, քան 5 տարի տևողությամբ, որի ընթացքում պետք է իրականացվեր նաև Գազայի հատվածի և Արևմտյան ավի ինտեգրացումը: Անցումային շրջանը նախատեսվում էր սկսել իսրայելական գործերի դուրսերումով Գազայից և Հերոնից: Կողմերը հավաստում էին, որ բանակցությունները Պաղեստինի վերջնական կարգավիճակի վերաբերյալ պետք է սկսվեն առաջին իսկ հնարյակության պարագայում, սակայն, ոչ ուշ, քան անցումային փուլի 3-րդ տարում, այսինքն՝ 1996 թ.: Պաղեստինյան ինքնակառավարումը չէր տարածվում Երուսաղեմի և որոշ ռազմական շրջանների վրա: Իսրայելը պահպանում էր իր ինքնիշխանությունը գրաված տարածքներում գտնվող հրեական բնակավայրերի վրա[8]:

«Սկզբունքների վերաբերյալ» վերոհիշյալ համաձայնագիրը, ինչպես նաև 1995թ. սեպտեմբերի 28-ին Արևմտյան ավի և Պաղեստինի ինքնավարության հետագա զարգացման վերաբերյալ Վաշինգտոնում ստորագրված պաղեստինա-իսրայելական նոր համաձայնագիրը (Օպո-2) ետքնթաց դիտարկվեց սիրիական իշխանությունների կողմից պաղեստինյան հիմնահարցի հանգուցալուծման գործում: Դամասկոսի դիրքորոշումը խարսխվում էր այն իրողության վրա, որ Իսրայելի և Պաղեստինի միջև հարաբերությունների բարեկամնան ֆոնին թուլանում էին Սիրիայի դիրքերը տարածաշրջանում[9]: Դամասկոսը սեփական դիրքերի թուլացման պատճառներից էր համարում Իսրայելի հետ բանակցություններում որպես առանձին կողմ հանդես եկող ՊԱԿ-ին:

Այս համատեքստում սիրիական իշխանությունների կողմից որոշակի ակտիվություն նկատվեց հատկապես պաղեստինյան այլ կառուցմերի հետ աշխատանքներում, որոնց շրջանում նոյնպես հակասական տրամադրություններ էին իշխում պաղեստինա-իսրայելյան բանակցային գործնթացի հետ կապված[10] <Ասադի կողմից աջակցություն ստացող հակառավարյան պաղեստինյան որոշ խմբավորումներ սիրիական իշխանությունների կողմից օգտագործվում էին ինչպես թուրքայում ահաբեկչական քռարարքներ իրականացնելու և անկայունություն սերմաններու, այնպես էլ Սերժավորարելյան տարածաշրջանի այլ հատվածներում սեփական նպատակներին ժառայեցնելու համար[11]:

1996թ. կեսերից սկսած՝ պաղեստինա-իսրայելական հարաբերություններում վատթարացում նկատվեց, որը պայմանավորված էր Իսրայելում ներքաղաքական վիոլենտություններով և Իսրայելի և Պաղեստինյան ինքնավարության միջև անվատահության մթնոլորտի խորացմամբ: Այն ավելի սուր բնույթ ստացավ հատկապես 2000թ. սեպտեմբերին, երբ ընդդիմադիր աջակողման «Լիկուր» կուսակցության առաջնորդ Ա.Ճարոնը այցելեց Երուսաղեմ, որտեղ ի պատասխան Երուսաղեմը երկու՝ արևմտյան-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

իսրայելական և արևելյան-արաբական, մասերի բաժանելու իսրայելի վարչապետ է. Բարաքի առաջարկությանը, ԱՇարոնը հայտարարեց, որ «կօգտագործի բոլոր ժողովրդական միջոցները Երուսաղեմի մասնաշուումը բացառելու համար»: Այդ հայտարարությունը իսրայելական իշխանությունների դեմ պաղեստինցիների զանգվածային ցույցերի և երկրորդ «ինթիֆադա»-ի մեկնարկի պատճառ դարձավ[12]: Սիրիական իշխանությունները փորձում էին ուղղորդել տարածաշրջանում իրենց գլխավոր հակառակորդի՝ իսրայելի դեմ ավելացող հանարաքական բացասական տրամադրությունները շահարկելով նաև 2000-ական թթ. սկզբում մեկնարկած «ինթիֆադան»: Հիշալի համատեքսուում սիրիա-պաղեստինյան դիրքորոշումները համընկնում էին, ինչը 2000-ական թթ. սկզբում Երկողմանի հարաբերություններում առկա լարվածության առավել մեղմ բնույթ հաղորդեց[13]:

Ինչ վերաբերում է պաղեստինյան հիմնահարցի վերաբերյալ Թուրքիայի մոտեցումներին, ապա որանք իրենց ծևազորությունից ի վեր անցել էր շարժնթացի մի քանի փուլեր:

1970-ական թթ. պաղեստինյան հիմնախնդրի հետ կապված թուրքական իշխանությունների չեզոք քաղաքականության մեջ փոփոխություններ նկատվեցին: 1973 թ. Թուրքիան ՊԱԿ-ը ճանաչեց որպես պաղեստինյան ժողովրդի ներկայացուցիչ, իսկ 1979թ. ՊԱԿ-ը իր առաջին գրասենյակը բացեց Թուրքիայի Ստամբուլ քաղաքում: Սակայն իհշալ կառուցի և Անկարայի համար անցանկալի դիտարկվող Սերժավորարևելյան տարածաշրջանի որոշ կառուցմերի(Թուրքիստանի աշխատավորական կուսակցության (ՔԱԿ), ԱՍԱԼԱ), միջն կապերը ստիպեցին Թուրքիային որոշ գգուշավորություն ցուցաբերելու պաղեստինցիների հետ հարաբերություններում[14]:

1970-ական թթ. կեներին տնտեսական ճգնաժամը որոշակի փոփոխություններ մտցրեց պաղեստինյան խնդրի վերաբերյալ թուրքական քաղաքականության մեջ: Իր ուշադրության կենտրոնում պահենով պաղեստինցիներին՝ Թուրքիան փորձում էր խորացնել կապերը ներզավակիրներով հարուստ տարածաշրջանի արաբական երկրների հետ, որը Անկարային հնարավորություն կտար հնարավորինս անցնում հաղթահարելու տնտեսական ճգնաժամը[15]:

Վերոհիշյալի համատեքսուում Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ առաջին երկիրն էր, որը 1988թ. դիվանագիտական կապեր հաստատեց Պաղեստինի հետ[16]: Անկարան խորացրեց տնտեսական և քաղաքական կապերը ՊԱԿ-ի հետ՝ տրամադրելով տարաբնույթ օժանդակություն (պաղեստինցի փախստականների բնակեցման, տարբեր ենթակառուցվածքային ժողովերի և այլնի առումն): Թուրք-պաղեստինյան փոխհարաբերություններում նկատվեցին տարբեր մակարդակով փոխադարձ այցելություններ, որոնց ընթացքում պաղեստինյան նեկավարության կողմից լսելի դարձան հայտարարություններ թուրք-իսրայելական խորացող հարաբերությունների օգուին[17]:

Մինչև 1990-ական թթ. սկիզբ թուրքական իշխանությունները փորձում էին խուսափել արաբական երկրներում գոյություն ունեցող հիմնախնդիրների հանգուցալու ժումներում ակտիվ դերակատարություն՝ միևնույն ժամանակ պահպանելով հարաբերությունները մերժավորարևելյան տարածաշրջանային գրեթե բոլոր երկրների հետ: Բացառություն էին կազմում Սիրիայի հետ հարաբերությունները, որտեղ առկա էին մի շարք խնդիրներ, այդ թվում տարածքային, որոնց հանգուցալուժման գործում կողմերը որևէ կերպ ընդանուր եղեր չէին կարողանում գտնել: Սակայն հետազոտում Թուրքիան փորձեց առաջատար դիրքեր ստանձնել իսլամական աշխարհում, որի համար Անկարան ակտիվություն ներքաշվեց նաև պաղեստինյան հիմնահարցի կարգավորման գործընթացի մեջ:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

1990-ական թթ. իսրայելա-պաղեստինյան հարաբերություններում արծանագրված առաջընթացը (ԱՄՄ միջնորդությամբ իսրայելի և Պաղեստինի ինքնավարության միջև ստորագրված 1993 թ. սեպտեմբերի 13-ի, 1995 թ. սեպտեմբերի 28-ի համաձայնագրերը և այլն) ստիպեց Անկարային Մերձավոր Արևելքում կայունությանը միտված բանակցային գործընթացում ակտիվություն դրսւորելու: Սա թուրքիայի կողմից դիտարկվում էր տարածաշրջանում տնտեսական համագրոժանում տնտեսական խթանմանը միտված գործընթացի համատեքստում, որը կավելացներ թուրքիայի տնտեսական հնարավորությունները Մերձավոր Արևելքում[18]:

ԽՍՀՄ վիլուգումը և Պարսից ծոցի առաջին պատերազմը մի շարք փոփոխություններ ի հայտ բերեցին 1990-ական թթ. մերձավորարևելյան տարածաշրջանում տեղ գտած գործընթացներում[19]: Նշյալ փոփոխություններն ստիպեցին թուրքական իշխանություններին խորացնելու հարաբերությունները իսրայելի հետ, իսկ հիշյալ ժամանակաշրջանի առաջին կետում Անկարայի առաջ ծառացած անվտանգային որոշ խնդիրներ (Սիրիայի, Իրաքի և Իրանի աջակցությունը, Թուրքիայում Քուրդիստանի Աշխատավորական Կուսակցության գործունեությանը, Սիրիայի հետ ջրային ռեսուրսների բաշխման հիմնախնդիրը, իրանական վարչակարգի հետ կապված «անհանգույթյունը», Թուրքիայի մի շարք հարևանների միջև ընթացող ռազմաքաղաքական համագրոժակցությունը (Հունաստան-Կիպրոս, Հունաստան-Սիրիա, Հայաստան-Իրան և այլն) մղեցին Թուրքիային ռազմավարական համաձայնության եզրեր փնտրելու իսրայելի հետ[20]:

1996թ. Թուրքիայում իշխանության եկած իսլամական «Բարօրություն» կուսակցությունը՝ Ն. Էրբաքանի գիլավորությամբ, փորձեց խաթարել իսրայելի հետ հարաբերությունների խորացումն ու թուրք-իսրայելական «մեղրամիսը», որը, սակայն, չստացվեց [21]: Հետագա բանակցային փուլերում իսրայելի և Պաղեստինի միջև անհամաձայնությունները (հատկապես այն բանից հետո, երբ իսրայելում իշխանության եկավ աջակողմյան «Լիկուդ» խմբավորումը՝ Բ. Ներանյահուի գլխավորությամբ) նոր իսրայելական կառավարությունը դնեն էր «Օսլոյի» գործընթացին և պաղեստինյան խնդրում առավել կոշտ քաղաքականության կողմնակից էր) 2000թ. սեպտեմբերից սկսած երկրորդ «ինքիֆադա»-ն որոշ խնդիրներ առաջացրին Թուրքիայի և իսրայելի միջև հարաբերություններում [22]: Նոյն թվականի հոկտեմբերին Թուրքիան ողջունեց իսրայելի կողմից պաղեստինցիների հանդեպ իրականացված բռնությունը դատապարտող ՄՍԿ-ի կողմից ընդունված բանաձևը [23], իսկ նոյմ ամսվա Վերջում Ստամբուլում տեղի ունեցած իսլամական տնտեսական կոնֆերանսում թուրքական իշխանությունների կողմից քննադատության արժանացավ պաղեստինցիների հանդեպ իսրայելի քաղաքականությունը [24]:

2002թ. նոյեմբերին Թուրքիայում տեղի ունեցած ընտրություններում հաղթեց «Արդարություն և զարգացում» կուսակցությունը՝ Ռ. Թ. Էրդողանի գլխավորությամբ, որի անդամների մեծ մասը նախկինում Ն. Էրբականի գլխավորած իսլամական «Բարօրություն» կուսակցության անդամ էր: Վերջիններիս զգալի հատվածը բացասարար էր վերաբերվում իսրայելի հետ հարաբերություններին:

Այսպիսով՝ 1990-2002թթ. պաղեստինյան հիմնահարցը եղել է Սիրիայի և Թուրքիայի արտաքին քաղաքական օրակարգում: Հիշյալ երկրներն այդ հիմնախնդիրը փորձել են օգտագործել մերձավորարևելյան տարածաշրջանային գործընթացներում սեփական շահերին ծառայեցնելու համար: Դա նկատվել է ինչպես տարածաշրջանային ընդհանուր զարգացումներում, այնպես էլ առանձին երկրների հետ հարաբերություններում:

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Սիրիայի կողմից պաղեստինյան հիմնահարցը օգտագործվել է տարածաշրջանում, մասնավորապես իրեն հարևան Երկրներում սեփական հեղինակության բարձրացման և Մերձավոր Արևելքում ընթացող որոշ գործընթացների վրա ազդելու համար: Մասնավորապես պաղեստինյան հիմնահարցը Սիրիայի կողմից դիտարկվել է որպես Թուրքիայի և Իսրայելի ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների վրա ազդելու արդյունավետ միջոց:

Սիրիական իշխանությունների կողմից փորձ էր արվում Պաղեստինյան ինքնավարության կազմում ավելացնելու Դամասկոսի վերահսկողության տակ գտնվող պաղեստինյան կառուցների դերակատարումը՝ դրանով թուլացնելով Յ. Արաֆաթի և Վերջինիս կողմից գլխավորվող ՊԱԿ-ի դիրքերը: Դա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ ՊԱԿ-ը, խորացնելով հարաբերություններ Իսրայելի հետ, վերածվում էր մերձավորարևելյան տարածաշրջանային գործոնի, որի հետ հարաբերությունների կարգավորումը, առավել ևս այդ կառուցի վրա ազդելը, խնդրահարույց էր դառնում Դամասկոսի համար:

Թուրքիան նույնպես պաղեստինյան հիմնախնդիրը փորձում է ծառայեցնել տարածաշրջանում սեփական շահերի սպասարկմանը, որոնք դիտարկվում էին ինչպես հարևան Երկրների ու Իսրայելի հետ ընթացող զարգացումների համատեքստում, այնպես էլ Մերձավոր Արևելքում ծավաված քաղաքական և տնտեսական գործընթացներում սեփական հնարավորությունների իրագործման առումով:

Պաղեստինյան հիմնախնդիրը մահմեդական մի շարք Երկրների (այդ թվում Պարսից ծոցի հարուստ արաբական միապետությունների) կողմից դիտարկվում էր որպես Իսրայելի տարածաշրջանային քաղաքականության դեմ միասնական և արդյունավետ գործելու միջոց: Հետևաբար թուրքական իշխանությունները փորձում էին ակտիվություն դրսորել պաղեստինյան խնդրի հանգուցալուծման գործում և, կանգնելով պաղեստինցիների կողքին, փորձում էին խորացնել կապերը Էներգավիդրներով հարուստ տարածաշրջանի արաբական Երկրների հետ, որը հնարավորություն կտար հնարավորինս անցնցում հաղթահարելու տնտեսական զգնաժամը, որի մեջ էր հայտնվել Թուրքիան: Հետագայում 1990-ական թթ. կեսերին իսրայելա-պաղեստինյան հարաբերությունների խորացնան ֆոնին Թուրքիան, դրական վերաբերմունք ցուցադրելով պաղեստինյան խնդրի խաղաղ կարգավորման գործընթացի վերաբերյալ, փորձեց այն օգտագործել Իսրայելի հետ սեփական հարաբերությունների կարգավորման և տարածաշրջանում տնտեսական համագործակցության խթանմանը միտված գործընթացի համատեքստություն:

Սակայն 1990-ական թթ. վերջում իսրայելա-պաղեստինյան հարաբերություններում արձանագրված ետքնթացը, իսրայելական իշխանությունների դեմ 2000 թ. սկսված երկրորդ ինքիֆադան փոխեցին թուրքական իշխանությունների քաղաքականությունը Իսրայելի հանդեպ: Իսկ արդեն 2002 թ. Թուրքիայում իշխանության եկած իշխանական «Արդարություն և զարգացում» կուսակցության վերաբերմունքը պաղեստինյան հիմնահարցին բխեց իսլամական աշխարհում առաջնային դիրքեր ստանձնելու Ո. Թ. Էրդողանի կողմից վարվող քաղաքականությունից, որը լարեց հարաբերությունները Իսրայելի հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն: Հատոր IV. Անկախության և ինքնիշխանության դարաշրջան: 1918-2005թ., Եր., Զանգակ-97, 2007, էջ 282:
2. Տե՛ս նույն տեղում, էջ 292-293:
3. Տե՛ս ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի №242 բանաձև,
<http://www.eretzisrael.co.il>
4. Տե՛ս New York Times, Seale P., Full Peace for Full Withdrawal, May 11, 1993:
5. Թուլացնելով ՊԱԿ-ը Հ. Ասադը փորձում էր այն էլ ավելի վերահսկելի դարձնել սիրիական իշխանությունների համար:
6. Յասեր Արաֆաթը նույնիսկ անվանեց սիրիական իշխանություններին՝ «Արաբերեն խոսացող սիրիական ժողով» (Տե՛ս Iraqi News Agency, July 14, 1988.):
7. Տե՛ս The Washington Institute for The Near East Policy, Policy Papers, Pipes D., Syria beyond the Peace Process, Washington D.C., N 40, 1996, pp. 48-49.
8. Տե՛ս Հովհաննիսյան Ն., Աշվ. աշխ., էջ 316:
9. Ըստ Հ. Ասադի. «Եթե մենք ուզենանք խանգարել այդ գործընթացը (իսրայելապահեստինյան բանակցային գործընթացը), մենք կարող ենք անել դա: Եթե պարզ դառնա, որ վերջինիս վնասը մեծ է, մենք այդպես էլ կվարվենք» (Տե՛ս Al-Akhbar, September 20, 1993):
10. 3. Արաֆաթը և նրա կողմնակիցները սուր քննադատության ենթարկվեցին: Ծայրահեղական և կոչտ դիրք որդեգրած պահեստինյան կազմակերպությունները 3. Արաֆաթին անզամ որպես «դավաճան» մահվան դատապարտեցին: Այդ մրնուրութում ՊԱԿ-ի շարքերում նկատվեցին պառակտումներ: Իսրայելի հետ ստորագրված պայմանագրերի դեմ շարժում ծավալեցին «Համաս», «Զիհար» և «Հիզբուլլա» ծայրահեղական կազմակերպությունները, որոնք իրաժարվում էին ճանաչել իսրայելի գոյությունը (Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն: Հատոր IV, էջ 318-319):
11. Արու Նիդալի կառուցքը 1986 թ. սեպտեմբերին մասնակցեց Ստամբուլի սինագոգներից մեկում իրականացված բանարարին: (Տե՛ս The Washington Institute for The Near East Policy, Policy Papers, Pipes D., Syria beyond the Peace Process, Washington D.C., N 40, 1996, p. 56.):
12. Տե՛ս Տոկумов Ե., Арабо-израильский конфликт и исламский экстремизм, “Политология”, М., 2001. стр. 123-124.
13. Տե՛ս The Washington Institute for The Near East Policy, Policy Papers, Pipes D., Syria beyond the Peace Process, Washington D.C., N 40, 1996, p. 49.
14. Տե՛ս Թուրքիայի և ՊԱԿ-ի հարաբերությունները շարունակում էին մնալ սարը այն բանից հետո, եթե 3. Արաֆաթի կողմից գլխավորվող ՊԱԿ-ը կասկածվում էր տարածաշրջանում Թուրքիայի հիմնական մրցակիցների հետ հարաբերությունների զարգացման մեջ: Սասնավորապես, Անկարան կասկածում էր ՊԱԿ-ին 1970-80-ական թթ. քուրդ և հայ ահարեկիչներին վերապատրաստելու մեջ (Տե՛ս Aras B. Palestinian-Israeli Peace Process and Turkey, Commack, N.Y, Nova Science Publishers. 1998, p.125):
15. Տե՛ս Brandenburg R., No Longer Newlyweds: The Evolution of Turkish Foreign Policy Toward Israel, p. 5, http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_47.pdf.

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՎԱՐ 2016

16. Sté u Bali Aykan M., The Palestinian Question in Turkish Foreign Policy From the 1950s to the 1990s, International Journal of Middle East Studies 25, no. 1 (February 1993), pp. 91-110.
17. Sté u 1995 թ. 3. Արաֆաթը այցելեց Թուրքիա, որտեղ հանդես եկավ արաբական մի շարք երկների կողմից թուրք-խրայելական հարաբերությունների բնադատության դեմ՝ հրաժարվելով աջակցել ՔԱԿ-ին (Sté u Hale W., Turkish Foreign Policy 1774-2000, London 2002, p. 301):
18. Sté u Sayari S., Turkey and the Middle East in the 1990s, Journal of Palestine Studies, Vol. 26, No. 3. (Spring, 1997), pp. 49-50.
19. Sté u 1991թ. արաբական մի երկրի՝ Թուրքիայի բռնազավթումը մեկ այլ արաբական երկրի՝ Իրաքի կողմից, իսրայելա-պաղեստինյան բանակցային գործընթացի մեկնարկը (որը սկսվեց Մադրիդի վեհաժողովից՝ և ավելի ակտիվ փուլ տեղափոխվելով հատկապես Օլյոյում 1993 թ.) և այլն:
20. Sté u Brandenburg R., No Longer Newlyweds: The Evolution of Turkish Foreign Policy Toward Israel, p. 7, http://www.esiweb.org/pdf/esi_turkey_tpq_id_47.pdf.
21. Sté u Robins Ph., Turkey and the Middle East, New York, The Royal Institute of International Affairs Council on Foreign Relations Press, 1991, p. 249.
22. Sté u Bengio O., The Turkish-Israeli Relationship, NY, Palgrave MacMillan, 2004, p. 157.
23. Sté u Resolution 1322 (2000) Adopted by the Security Council at its 4205th meeting on 7 October 2000, <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N00/679/37/PDF/N0067937.pdf?OpenElement>
24. Sté u Middle East New Agency (Cairo). Oct. 26, 2000.

ԱՍՓՈՓԱԳԻՐ

Պաղեստինի հիմնահարցը և թուրք-սիրիական հարաբերությունները

20-րդ դարի 90-ականներին

Արսեն Զուլֆալակյան

Հոդվածը նվիրված է Մերձավոր Արևելքում երկու հզոր երկների՝ Թուրքիայի և Սիրիայի պատմական հարաբերություններին, որոնք ծավալվել են պաղեստինյան հիմնահարցի շուրջ 20-րդ դարի 90-ականներին տեղ գտած դիվանագիտական ակտիվացումների ներքո: Հոդվածում ներկայացվում են ինչպես պաղեստինյան հիմնահարցի նախապատմության առանձին դրվագներ, այնպես էլ Անկարայի ու Դամասկոսի դիրքորոշումները Պաղեստինի քաղաքական ապագայի վերաբերյալ՝ թուրք-խրայելական ու սիրիա-խրայելական ոչ միանշանակ հարաբերությունների ներքո:

РЕЗЮМЕ

**Проблема Палестины в контексте турецко-сирийских отношений
в 90-ых годах XX века**
Арсен Джулфалакян

Ключевые слова: проблема Палестины, Сирия, Турция, Израиль, турецко-сирийские отношения.

Статья посвящена изучению отношений между Турцией и Сирией в контексте урегулирования проблемы Палестины дипломатическими методами в 90-ых годах XX века. В статье представлены как отдельные исторические стороны проблемы Палестины, так и позиция Анкары и Дамаска по поводу политического будущего Палестины в контексте неоднозначных турецко-израильских и сирийско-израильских отношений.

SUMMARY

The Palestine issue and Syria-Turkey relations in the 90 years of the XX century
Arsen Julfalakyan

Keywords: Palestine issue, Syria, Turkey, Israel, Turkish-Syrian relations.

The article addresses the historical relations of Turkey and Syria - two powerful Middle East countries - in the context of the activated diplomatic efforts over the Palestine issue in the 90s of the 20th century. The article dwells upon separate episodes of the Palestine issue, as well as about the positions of Damascus and Ankara in the light of Turkish-Israeli and Syrian-Israeli ambiguous relations.